

գալը ու կատարած գործերը, քսան հազար դր. պարտուց վճարումը. ինչպէս նաև նոյն օրերը պատահած Պէղէսթէնի հրդեհը, որուն պատճառաւ այրած են հարիւր հազար տուններ և խանութներ: Շոռօթեցի վրդ. ին այս զրէագիրը, որուն ստացողը եղած է Կնիսդ Նիկ. Երկ. Արղուէթեան, իր կողմէն 1831ին նուէր կուտայ վեհնետիկ Ս. Ղազարու մատենադարանին (Սրգ. Յուգ. Հտր. Ա. էջ 170-173): Փիլիպպոս կթղի. Երուսաղէմ գուժարած ժողովին յիշատակը յաւերժացնելու համար, մարմարեայ քարի մը վրայ յիշատակարան մը հաստատուած է Ս. Յակոբայ վանքին մէջ. բայց յետոյ դժբախտաբար այդ մարմարը մէջտեղէն կտորուած և փնասուած կը մնայ. հոն յիշատակուած են ժողովին մասնակցող տասներկու վարդապետաց անունները, որոցմէ ու մանք անընթեռնի դարձած են յիշատակարանին փնասուելուն պատճառաւ. սակայն Առաքել վրդ. ի անունը կը կարդացուի: Յիշատակարանին խմբագիրն ալ ինքն է, Առաքել վրդ. գծող սորա Շոռոթեցի:

ԱՌԱՔԵԼ ՎՐԴ. — (ՊԶԴ. = 1435) Երկայն Ընկուզի վանքին մէջ ընդօրինակուած Զեռ. «Յայսմաուրք» մը, (ՄԶ. Թ. 25) ՊԶԴ. Հայոց Թուական (= 1445), Ս. Յակոբայ վանքին յիշատակ կը տրուի հայրազգի Արեւշին կողմէն, Դամասկոսի մէջ՝ ըստ այս յիշատակարանին. «Ես Առաքել վրդ. ս և Պրն. Արեւշան Խօշաղամ աղայս տուաք զգիրքս այս ի սբ. քաղաքն Երուսաղէմ ի գուռն Ս. Յակոբ կաթուղիկէի. յիշատակ մեզ և ծնողաց մերոց և ամենայն տրեան մերձաւորաց: Զեռամբ և վկայութեամբ տէր Արրահամ եպս. ի Երուսաղէմի և վկայութեամբ տէր Յովհաննէս եպս. ի Արղնու... (Խապ. Յուգ. էջ 118):

Ուրիշ յիշատակարան մըն ալ նոյն ձեռագրին մէջ կը հաստատէ այս նուիրատուութիւնը. «Ես նուաստ ողիս տէր Արրահամ Երուսաղիմա եպ.՝ որ հանդիպեցայ ի Արղնին և երես նուէրք Սբ. Յակոբայ Եմա. կկեղեցոյն զգիրքս զայս և շուրջառ այլ պարոն Արեւշան յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ում. արեան մերձաւորաց իւրոց ումէն... Գրեցու ի մեծ թուին Հայոց մեծաց: ՊԶԴ. (= 1445). մարտ ամսոյ, ի գ. ի փոռս Այ. հաւր ամէն: Յաւուր աւագ շարթու զհաշաբաթի աւրն: Ի Դամասկոս քաղաք» (Նոյն անդ):

ԱՌԱՔԵԼ ՔԶ. ԿԵՆՃԵՑԻ, Մբ. — (ՄԶ. Թ. 44) Աւետարան